ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/198

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե

Մասնակից՝ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնանշման հարցում, համակարգչային տեխնիկայի և այլ տեխնիկական սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13928-2020 գրությամբ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի 09.09.2020թ.-ի թիվ 03/13.9/6649-2020 գրության հիման վրա, 15.09.2020թ.-ին «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 15.09.2020թ.-ին:

15.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/198 համարի ծածկագիրը:

25.09.2020թ.-ին և 09.10.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 25.09.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 09.10.2020թ.-ին:

2. **<u>ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեն 09.09.2020թ.-ի թիվ 03/13.9/6649-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և այլ տեխնիկական սարքավորումների ձեռքբերման նպատակով սույն թվականի օգոստոսի 14-ին կազմակերպվել է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ն: Վերջինս գրությամբ դիմել է գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հայտնելով գնման ընթացակարգին իր հետագա մասնակցությունից հրաժարվելու մասին: Վերոգրյալով պայմանավորված «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի սույն թվականի սեպտեմբերի 08-ի թիվ 5 որոշմամբ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով հայտարարված

գնման ընթացակարգի շրջանակներում «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13928-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին՝ չներկայացնելով նաև գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/198 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային տեխնիկայի և այլ տեխնիկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 14.08.2020թ.-ին հայտարարվել է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.09.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

v. Նույն արձանագրության համաձայն՝ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ն ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ է սահմանվել 5 օրացուցային օր:

vi. 02.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

vii. «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ն 08.09.2020թ.-ին դիմել է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել է, որ որպես հաղթող մասնակից հրաժարվում է ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և այլ տեխնիկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելուց, ինչի պատճառ է հանդիսանում այն, որ գնային առաջարկում սխալմամբ ներկայացրել է առաջարկվող ապրանքի միավորի արժեքը, այլ ոչ հրավերով նախատեսված ապրանքի ընդհանուր քանակի:

viii. Հանձնաժողովի 08.09.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Մասնակցի 08.09.2020թ.-ին ներկայացված գրությունը, որոշել է «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13928-2020 գրությամբ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը հայտերը բացելուց հետո հրաժարվում է գնման գործընթացին հետագա մասնակցությունից, նման դեպքում առաջանում է «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից համակարգչային տեխնիկայի և այլ տեխնիկական սարքավորումների ձեռքբերման նպատակով 14.08.2020թ.-ին հայտարարված «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությամբ, հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման 1-ին չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ: Մասնակիցը նաև հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

Հանձնաժողովի 01.09.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և վերջինս ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված (հաղթող) մասնակից, ինչով պայմանավորված 02.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակվել է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը: Սակայն «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ն 08.09.2020թ.-ին դիմել է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և հայտնել է, որ որպես հաղթող մասնակից հրաժարվում է ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի կարիքների համար համակարգչային տեխնիկայի և այլ տեխնիկական սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելուց, ինչի պատճառ է հանդիսանում այն, որ գնային առաջարկում սխալմամբ ներկայացրել է առաջարկվող ապրանքի միավորի արժեքը, այլ ոչ հրավերով նախատեսված ապրանքի ընդհանուր քանակի, ինչի արդյունքում Հանձնաժողովի 08.09.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ն 08.09.2020թ.-ին Հանձնաժողովին ուղղված գրությամբ, հրաժարվելով պայմանագիր կնքելուց, ըստ էության հրաժարվել է «ՊԳԿԿ-ԳՀԱՊՁԲ-2020/14» ծածկագրով գնման ընթացակարգի հետագա մասնակցությունից, քանի որ գործում առկա նյութերի համաձայն Մասնակցին դեռևս չէր ներկայացվել պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

Ուստի, նման պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի դրույթները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13928-2020 գրությամբ «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/198 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Սքայ Էլեկտրո» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**